

**ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՆ ՎՐԱՑԵՐԵՆ
«ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ» ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՐ**

ԱՐԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Շուրշ մեկ դար առաջ՝ 1888 թ., Թիֆլիսում հրատարակվող վրացերեն «Իվերիա» լրագրում տպագրվեց Վրաց ազգաբնակչության շրջանում գրագիտության տարածման ընկերության գրադարանին նվիրաբերված ձեռագրերի մի ցուցակ՝ մատենագիտական հակիրճ նկարագրությամբ հանդերձ¹։ Լրագրի նույնամբերի 12-ի համարում նկարագրված 1141 գրչագիրը հետագայում պիտի հռչակվեր Շատրեբդյան ժողովածու առանձին և իր վրա հրավիրեր բազմազգի բանասերների ուշադրությունը։ Հիշյալ ժողովածուն կազմել և նյութերի ղգալի մասն արտագրել է վրացի գրիչ Հովհան Բերան X դ. 70-ական թվերին և նվիրել Շատրեբդի² վանքին, որտեղ ինքը կրթվել ու գրչություն էր սովորել։ Ժողովածուն ամփոփում է 8 տարբեր հեղինակների թվով 14 երկեր ու մեկնություններ, որոնք բոլորն էլ շատ վաղ միջնադարյան գրական հուշարձաններ են և բացառիկ արժեք են ներկայացնում պատմաբանասիրական առումով։ Բավական է ասել, որ այն պարունակում է սուրբ Նինոյի (Նունե) ձեռքով Վրաց քրիստոնեությունը ընդունելու ավանդությունը՝ «Վրաց դարձը»։ Ահա թե ինչու, Վրացական ՍՍՀ ԳԱ Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտը 1979 թ. ամրոդշությամբ հրատարակեց այդ գրչագիր ժողովածուն՝ վրացերեն ու ռուսերեն առաջաբաններով և վրացերեն ընդարձակ ներածությամբ։

Ն. Մառը Շատրեբդյան ժողովածուին անդրադարձավ ավելի հանգամանորեն իր իսկ հիմնադրած «Тексты и разыскания по армяно-грузинской филологии» մատենաշարի երրորդ և վեցերորդ հատորներում³, որտեղ լեզվաոճական բազմաթիվ բաղադատումներով ցույց տվեց, որ ժողովածուում ընդգրկված երկերի մի նշանակալից մասը վրացերեն է թարգմանվել հայերենից։ Ի շարք այլոց, ժողովածուում տեղ են գտել Հիպոդիտոսին պատկանող կամ վերագրված 7 մեկնություն, որոնցից 6-րդի վերնագիրն է՝ «եսոսը սուրբ Հիպոդիտոսի» հավատի մասին» կամ, եթե գրաբար թարգմանելու լինենք՝ «Բան սրբոյն Հիպոդիտոսի վասն հաւատոյ»։ Այս դավանաբանական երկի առաջին հանգամանալից ուսումնասիրությունը կատարել է Գյոտինգենի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր, դոկտոր Գ. Նաթանայել Բոնվեյլը, որը 1907 թ. լույս ընծայեց այն՝ գերմաներեն թարգմանությամբ և առաջաբանով⁴։ «Վասն հաւատոյ»-ն Բոնվեյլի ուշադրությունը գրավեց նախ և առաջ այն պատճառով, որ, ինչպես հուշում է վերնագիրը, վրացերեն այդ երկը վերագրված էր II—III դդ. հույն աստվածաբան Հիպոդիտոսին⁵։ Այդ հետա-

¹ «ცეცხი», ტფილისი, 9, 11—13. XI և 1. XII. 1888: Հետագայում, ինչպես նշել է Ն. Մառը, ցուցակը կազմել և ձեռագրերի համառոտ նկարագրությունը կատարել էր իր ձեռքով՝ գրադարանի առօրյա պետքերի համար, բայց տպագրության էր հանձնվել առանց իր գիտության և ստորագրության (տե՛ս «Тексты и разыскания по армяно-грузинской филологии», книга III, СПб., 1901, с. 1):

² Բնակավայր պատմական Գուգարիի Կղարշք գավառում։ Շատրեբդի հայոց վանքում գրվել են հայերեն, հունարեն և վրացերեն շատ ձեռագրեր։

³ И п о л н ы, Толкование песни песней. Грузинский текст по рукописи X века. Исследовал, перевел и издал Н. Марр («Тексты и разыскания по армяно-грузинской филологии», кн. III, СПб., 1901); Н. Марр, Физнолог, армяно-грузинский извод. Грузинский и армянский тексты («Тексты и разыскания», кн. VI, СПб., 1904).

⁴ Die unter Hippolyts Namen überlieferte Schrift Über den Glauben nach einer Übersetzung der in einer Schatberder Handschrift vorliegenden georgischen Version, herausgegeben von G. Nathanael Bonwetsch („Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur“, herausgegeben von A. Harnack und K. Schmidt, Bd. 31, 2. Leipzig, 1907, S. 1—36).

⁵ Հիպոդիտոս Բոստրացի— ծնվ. մոտ 170 թ. Ալեքսանդրիայում կամ Փոքր Ասիայում, մահ. 253 թ. Սարգիսիայում։

բարբրությունը հասկանալի կլինի, եթե ասենք, որ մինչ այդ Բոնվելը զբաղվել էր Հիպոդիտոսի Իրկերի քննասիրությամբ և Հանս Ախելիսի աշխատակցությամբ հրատարակել դրանք 1897 թ.՝ Հիպոդիտոսի երկերին լավատեղյակ Բոնվելը հիմնովին հերքեց «Վասն հաւատոյ»-ն այդ հեղինակի գրչին պատկանելու հանգամանքը՝ հատկապես այն պատճառով, որ տրակտատը պարունակում է արիոսական հերետիկոսության վերաբերյալ բացահայտ ակնարկներ (XII, 1—2) և կարծիք հայտնեց, որ վրացերեն այդ երկը պատկանում է IV դ. վերջին: «Վասն հաւատոյ»-ի նախաբանագրի որոնումները հունարեն և ասորերեն սրբախոսական զրականության մեջ շարունակվեցին նաև հետագայում, մինչև որ նրա գերմաներեն հրատարակությունից շուրջ կես դար անց՝ 1965 թ., օրիստոնյա Արևելքի մատենագրական հուշարձանների նշանավոր հետազոտող, բնագրի պրոֆեսոր ժերար Գարիտը⁷ հանդես եկավ բանասերների համար միանգամայն անակնկալ հայտնությամբ և մանրակրկիտ բաղդատումներով ցույց տվեց, որ վրացերեն «Վասն հաւատոյ»-ն քաղաքոված և թարգմանված է հայերեն Ազաթանգեղոսի Պատմության տարբեր մասերից, հիմնականում Վարդապետությունից: Ընդ որում Ժ. Գարիտը, ըստ մեծի մասին, ճշգրիտ մատնանշեց «Վասն հաւատոյ»-ի բնագրում Ազաթանգեղոսի համապատասխան պարբերությունները, որոնք անհայտ մատենագիրն ընտրել է ոչ թե հայերեն բնագրի՝ հերթականությամբ, այլ միանգամայն խառն, եռեռոտ զասավորությամբ կցել է իրար և դրանց բառացի թարգմանությամբ կաղմել իր գավառաբանական երկը: Մի հանգամանք, որ ակնհայտ դժվարացրել է «Վասն հաւատոյ»-ի նախաբանագրի հայտնաբերման խնդիրը: «Le Museon» հանդեսում Ժ. Գարիտը զուգահեռ հրատարակեց «Վասն հաւատոյ» երկի վրացերեն բնագիրը՝ իր կատարած լատիներեն թարգմանության հետ («Sermo sancti Hippoliti de fide») (էջ 126—164), ինչպես և Ազաթանգեղոսի համապատասխան պարբերությունների լատիներեն թարգմանությունը և երկու բնագրերի համամատական տախտակ (էջ 122—123), որն ընթերցողի համար ակնբախ է դարձնում համադրվող հատվածների նույնությունը: Այդպիսով, «Հիպոդիտոսին վերագրված «Վասն հաւատոյ» վրացերեն տրակտատը մեծարժեք հոգովածում Ժ. Գարիտը եկավ հետևյալ եզրակացության. «Վրացերեն տրակտատը թարգմանություն է ոչ թե նույնանման մի նախօրինակից, այլ մի ավելի ծավալուն երկից կազմված քաղվածաշարից: Պարզվում է, որ աղբյուրը ոչ այլ ինչ է, քան Ազաթանգեղոսի մատյանը՝ հայ հին գրականության այդ պատկառելի հուշարձանը, որը պատմում է Գրիգոր Լուսավորչի ձեռքով Մեծ Հայքի հավատափոխման մասին: Վրացերեն «De fide»-ն այդ հայերեն մատյանից փոխառյալ վկայությունների մի իսկական centon⁸ է: Հատվածների մեծ մասը վերցված է, բնականաբար, այն մեծ կատեխիզիսից, որ Ազաթանգեղոսը վերագրում է սուրբ Գրիգորին (Տիգրիս, 1909 թ., § 259—715, էջ 134—372): Այս երկարաշունչ Վարդապետությունը պահպանվել է միայն հայերեն բնագրում, չի վերարտադրվել հետագա խմբագրություններից և ոչ մեկում և դեռևս երբեք չի թարգմանվել ոչ մի ժամանակակից լեզվով: «Վասն հաւատոյ»-ն համեմատելով հայերեն սկզբնաղբյուրի հետ, պրոֆ. Ժ. Գարիտը ցույց տվեց, որ «Վրացերեն արևելատառում քաղվածները ներկայացված են խառնխուռն, որոշ հաջորդականություն է նկատվում միայն վերջում (XV, 6-ից մինչև XVII, 3), որտեղ վրացերենը հետևում է հայերենի 704—714-ի հերթակարգին (այն էլ կրճատումներով ու հավելումներով)»¹⁰:

Բնագրի արևելագիտի կատարած ուղղորդված բնագրաքննության արդյունքները չէին կարող բանասիրության մեջ մնալ անարձագանք: Դրանք այն աստիճան համոզիչ էին, որ 1979 թվա-

⁷ «Die griechischen christlichen Schriftsteller der ersten drei Jahrhunderte. Hippolytus Werke, erster Band. Exegetische und homiletische Schriften», herausgegeben von G. Nath. Bonwetsch und Hans Achelis. Leipzig, 1897.

⁸ G. Garitte, Le Traité georgien «Sur la foi» Attribue a Hippolyte, «Le Museon», T. LXXXVIII, 1—2, Louvain, 1965, (այսուհետև՝ «Le Museon»), p. 119—125.

⁹ Centon (լատ.) — քաղվածաշար, քաղվածաբան:

¹⁰ «Le Museon», p. 121. Ժ. Գարիտի սույն ուսումնասիրությունը լույս տեսնելուց հետո ս. Գրիգորի Վարդապետությունն անգլերեն թարգմանվեց ամերիկացի հայագետ Ռոբերտ Թոմսոնի ձեռքով և ընդարձակ ներածությամբ ու հարուստ ծանոթագրություններով լույս տեսավ Հարվարդի համալսարանի հրատարակությամբ 1970 թ. («The Teaching of Saint Gregory an Early Armenian Catechism» translation and commentary by Robert W. Thomson. Harvard University press. Cambridge, Massachusetts, 1970): Ս. Գրիգորի վաղապահանջությունը Արամ Տեր-Ղևոնդյանի հայերեն աշխարհարար թարգմանությամբ լույս տեսավ «Էջմիածին» ամսագրի 1978 թ. Դ, 2, է է 1979 թ. Բ, Ե համարներում:

¹⁰ «Le Museon», p. 123:

կանին Շատրեբրդյան ժողովածուն հրատարակելիս, վրացի մասնագետները գրքին կցված ռուսերեն ցանկում անհրաժեշտ նկատեցին հանել Հիպոգիտոսի անունը, իսկ գրքի ռուսերեն առաջարկում վրաց հին գրականության մասնագետ Մզեբայա Շանիձեն մատնանքեց. «Հիպոգիտոսին վերագրվող յոթ երկերից երկուսը իրականում նրան չեն պատկանում — դրանք են՝ «Հայկաթի վասի վասին» տրակտատը, որ զանազան լատիներերի ճաշակով է, և «Ուխտի կարգի մասին», որի հեղինակն է Ափրաստը»¹¹ (ընդգծումը մերն է — Ա. Մ.), կրկնում ենք՝ ժ. Գարիտն ապացուցեց, որ «Վասն հաւատոյ»-ն քաղաքություն է և քաղաքական կոնկրետ Աղաթանգեղոսի Պատմությունից: Բայց, ահա, 1982 թ. Աղաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները գրքով հանգես է գալիս Պ. Մուրադյանը: Օգտագործելով ժ. Գարիտի սույն հայտնադրածումը ընդգծել իր իսկ Գարիտի և հեշտությամբ ի չիք դարձնելով նրա դժվարինս ձեռք բերած արժեքավոր հզորակացությունները, նա «Վասն հաւատոյ»-ի հայերեն թարգմանությանն ընծայած նախաբանում¹² առաջ է անցնում և թյուրելով փաստերը, հանգում է միանգամայն հակառակ հետևություն: Հեղինակը փորձում է ժ. Գարիտի մեծարժեք հայտնությունը հարմարեցնել իր նորահնար վարկածին և այս նպատակով վրացերեն «Վասն հաւատոյ»-ն հարաբերության մեջ է դնում միմյան վարդապետության հետ: Նա դրում է, թե իբր ըստ Գարիտի, «Վասն հաւատոյ»-ն փաստորեն Աղաթանգեղոսի Պատմություն մուծված «Վարդապետության» համառոտված թարգմանությունն է (էջ 75), հակառակ որ, ինչպես տեսանք, ժ. Գարիտը Աղաթանգեղոսի ամբողջ Պատմությունն է համարում «Վասն հաւատոյ»-ի սկզբնաղբյուր, և ոչ թե միայն վարդապետությունը: Փաստուրեն, Պ. Մուրադյանը ժ. Գարիտի հոգվածի ֆրանսերեն տեքստը հայերեն մատուցում է աղավաղված և իր տեսակետին հարմարեցրած ձևով: Պարզապես Պ. Մուրադյանը շատ կցանկանար, որ Գարիտն այդպես առած լինեի: Իր իսկ սխալ հետևությունը վերագրելով ժ. Գարիտին, նա հիմա էլ առանց դուլզն պատճառի, չըջում է վարդապետություն — «Վասն հաւատոյ» հարաբերությունը և հզորակացումը, որ ոչ թե «Վասն հաւատոյ»-ն է համառոտված վարդապետությունից, ինչպես «կարծել է» ժ. Գարիտը, այլ ընդհակառակն, վարդապետությունն է ստեղծվել «Վասն հաւատոյ»-ի հիմքի վրա: Նա նույնիսկ հավասարության նշան է դնում այդ երկու դավանաբանական երկերի միջև, որոնք ծավալով իրար հարաբերում են այնպես, ինչպես մեկը՝ քսանին: «Այժմ ճշտված է առաջնահերթ մի առեղծված՝ այդ երկը նույն «Վարդապետությունն է» (էջ 75), — գրում է նա և իբր նույնության նշան, վրացերեն երկը կնքում ինքնահնար վերնագրով՝ «Վասն հաւատոյ» — վարդապետություն (էջ 72, 76, 79):

Աղաթանգեղոսի վերջնական, կանոնական խմբագրության ժամանակի վերաբերյալ բանասիրության մեջ այժմ տիրող կարծիքը պարզ և մեկին ձևակերպել է Ա. Տեր-Ղևոնդյանը, որի վստահական արդի աղաթանգեղադատության մեջ անուրանալի է. «V դարում գոյություն է ունեցել Աղաթանգեղոսի երկու խմբագրություն: Դարի առաջին կեսում կազմավորվել է այն հին խմբագրությունը, որն ինչ-ինչ պատճառներով դուրս է մղվել ասպարեզից: Հաղթել է դարի կեսերին կազմավորվածը, որը Ն. Մառի և Ն. Ադոնցի արտահայտությամբ՝ կարելի է իրոք համարել ազգային եկեղեցու խմբագրություն»¹³: Իսկ Պ. Մուրադյանի կարծիքով նախքան Աղաթանգեղոսի կանոնական խմբագրության ձևավորումը, գոյություն է ունեցել «Վասն հաւատոյ» կոչված ինչ-որ բնագիր (թե ի՞նչ լեզվով — չի ասվում), որը «խմբագրումով» մուծվել է Աղաթանգեղոսի Պատմության մեջ (էջ 81): Քանի որ «Վասն հաւատոյ»-ն, ըստ Պ. Մուրադյանի, «V դ. կեսի պատկերն է ներկայացնում» (էջ 81), իսկ Աղաթանգեղոսի կանոնական խմբագրությունը կաղ-

¹¹ «გაბეგრდოს კრებულის X საუკუნისა» თბილისი, 1979, გვ. 12.

¹² Պ. Մուրադյան, Աղաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 72—81 (այսուհետև այս աշխատությունից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից): Գրքում զետեղված է նաև «Վասն հաւատոյ»-ի հին վրացերեն բնագիրը՝ հայերեն ղուգագիր թարգմանությամբ (էջ 82—111): Հետագա շարադրանքում «Վասն հաւատոյ»-ի հատվածները բերում ենք սույն թարգմանությունից, նշելով գլխահամարները: Անհրաժեշտ դեպքերում գիմել ենք նաև երկի հին վրացերեն բնագրի օգնությանը և մատնանքի հայերեն թարգմանության լական շեղումները: Զարմանալի է, որ բազմիցս անդրադառնալով Շատրեբրդյան ժողովածուին, Պ. Մուրադյանը ոչ մի խոսքով չի հիշատակում այդ ժողովածուի 1979 թ. դիտական արժեքավոր հրատարակությունը:

¹³ Ա. Տեր-Ղևոնդյան, Աղաթանգեղոսի խմբագրությունների հարցն ըստ նորենացու տվյալների («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4, էջ 138):

մալորվել է, ինչպես ենթադրում է, դարձյալ V դարի կեսերին, ապա գա նշանակում է, որ կանոնական խմբագրության Վարդապետությունն առաջը, որը տեսել է վկայել է Ղազար Փարպեցին¹⁴, ընդամենը նույն այդ Վասն հաւատոյն է եղել Վասն հաւատոյն-ի մի նախնական բնագիր էլ շարունակել է իր անկախ գոյությունը նաև հետագայում (էջ 81) և, ինչպես տեսանք, մեզ է հասել վրացերեն՝ Շատրերդյան մոզովածուի միջոցով։ Այսպիսով, Վասն հաւատոյն-ն Պ. Մուրադյանի կարծիքով «ելման կետ» է ծառայում Վարդապետությունը քննելիս (էջ 81)։

Բայց ինչպե՞ս կարող է ընդամենը 12 էջ ծավալ ունեցող, Վասն հաւատոյն-ն¹⁵ նույնացվել այսօրվա մեր ունեցած Գր. Լուսավորչի Վարդապետության հետ, որը 232 տպագիր էլ ծավալ ունի և կազմում է Ազաթանգեղոսի Պատմության կեսից ավելին¹⁶։ Այս հարցը, իսկապես որ, անհանգստացրել է Պ. Մուրադյանին. «Թե ինչո՞վ է պայմանավորված հայերեն Վարդապետությունից ընդարձակ և Վասն հաւատոյն-ի համառոտ լինելը՝ առանձին ուսումնասիրելի հարց է» (էջ 75), բայց այն, ինչ որ առանձին ուսումնասիրելի է 75-րդ էջում, առանց որևէ քննության իր պատրաստի պատասխանն է գտնում 81-րդ էջում. պարզվում է, որ այդ մի քանի էջանոց Վարդապետություն կոչվածը «ժամանակի ընթացքում աճել-ընդարձակվել է հայրախոսական գրականությունից քաղումներ ու վերաշարադրումներ անելու հաշվին» (էջ 81)։ Նման բացատրությունը չի կարող բանավոր համարվել, որովհետև ազգային եկեղեցու կանոնական խմբագրությունն ասելով բանասիրության մեջ հասկանում են Ազաթանգեղոսի հենց այն վերջնական խմբագրությունը, որն այլևս անձեռնմխելի է մնացել V դ. կեսերից ի վեր և հետագա դարերում չի ձեռնարկվել փոփոխության՝ այլապես չէր կոչվի կանոնական, էլ ո՞ր մնաց, թե աճեր քանապատկ ծավալով։ Այսպես, ուրեմն Վարդապետությունը հետզհետե աճել և իր այսօրվա ծավալին է հասել ժամանակի ընթացքում, և այդ անորոշ երկար ժամանակաշրջանը պարզելու համար, Պ. Մուրադյանի կարծիքով, անհրաժեշտ է Գր. Լուսավորչի Վարդապետության մեջ ձգտել «քաղումներն ու վերաշարադրումները» համեմատել դրանց հունարեն բնագրերի հետ։ Բայց թա ինչպե՞ս կարելի է այսպիսի բարդատման ճանապարհով ժամանակ որոշել, այդ միայն իրեն է հայտնի, Իսկ մեզ համար պարզից պարզ է, որ Վարդապետությունից առաջ ոչ մի Վասն հաւատոյն էլ չի եղել և որ Գր. Լուսավորչի Վարդապետությունն իր այսօրվա ծավալով գոյություն ունի V դ. կեսերին և դրանից էլ առաջ։

Թեև Պ. Մուրադյանը խոստանում է աղբյուրագիտական-մեթոդական մի քանի դիտարկում կատարել, բայց ընթերցողը իզուր է դրա տակ հասկանում աղբյուրների կամ բնագրերի քննություն— որևէ նման բան նրա շարադրանքում հնարավոր չէ գտնել։ Առանց որևէ փաստարկման և պատմաբանասիրական վկայությունների, նա մատուցում է իր անառարկելի եզրակացությունները, որոնք ըստ էության դառնում են սոսկ անառարկա դատողություններ բանասիրական մի այնպիսի քաղվաչառչառ խնդրի շուրջ, ինչպիսին է Ազաթանգեղոսի բազմադարյան առեղծվածը, որը վաղուց սպասում է իր լուծման, այլ ոչ թե նորանոր անհիմն վարկածների առաջադրման։ Իր նոր տեսակետն առաջ մղելով, հարգելի աղբյուրագետը որևէ փոքր ի շատև նշանակալից փաստ կամ հիմք չի ներկայացնում. նրա այս տեսակետը հենվում է միայն թյուրիմացությունների վրա։ Նա հայտարարում է, թե վրացերենի թարգմանիչը Վասն հաւատոյն-ն Ազաթանգեղոսի Պատմությունից չի քաղել (էջ 81)։ Այսպիսի ընկալումը, իսկապես որ, թյուրիմացության արդյունք է։ Բանն էլ հենց այն է, որ վրացի անհայտ թարգմանիչը, ավելի ճիշտ՝ Վասն հաւատոյն երկը կազմող անհայտ մատենագիրը, միևնույն է՝ հայ թե վրացի, օգտվել է Ազաթանգեղոսի ամբողջական Պատմությունից և ոչ թե սոսկ միայն ս. Գրիգորի Վարդապետությունից։ Ժ. Գարիտի կազմած համեմատական տախտակից ցայտուն երևում է, որ Վասն հաւատոյն-ում քաղագրություններ կան ոչ միայն Վարդապետությունից, որն Ազաթանգեղոսի Պատմության նրկորդ գիրքն է, այլև Պատմության առաջին գրքի 81—85 (IV, 1), 254 (III, 2) պարբերություններից, ինչպես և Ազաթանգեղոսի նրկորդ գրքի 756 պարբերությունից (II, 3)։ Ի լրումն սրա, մենք պարզեցինք (տե՛ս ստորև), որ Վասն հաւատոյն-ի II, 3, X, 4 և 11 հատ-

¹⁴ «Ջյուրդորումն յայնմհետէ վարդապետութեան կենաց աշխարհիս Հայոց» են («Ղ ա զ ա ր ա յ ֆ ա ր պ ե ց ո յ Պատմութիւն հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տիգրիս, 1904, էջ 3)։

¹⁵ Շատրերդյան գրչագիր ժողովածուում Վասն հաւատոյն-ն բռնում է 193 (V) թերթից մինչև 203 (V) թերթը, ընդամենը 10 թերթ կամ 20 երես, իսկ 1979 թ. տպագիր հրատարակության մեջ՝ 292—303 էջերը, ընդամենը՝ 12 տպագիր էջ։

¹⁶ Տե՛ս Ա զ ա թ ա ն գ ե ղ ո ս ի Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 133—365։

վածներում բաղումներ կան նաև Ազաթանգեղոսի առաջին գրքի համապատասխանաբար 253—254, 30 և 79 պարբերություններին: Ավելին՝ վրացերեն բառացի թարգմանված՝ և օգտագործված է Ազաթանգեղոսի Պատմության վերջում գետնոված հավատո հանգանակի թվով՝ բառն կանոնների մեծ մասը՝ № 1—11 և № 18 (Տիգրիս, 1909 թ., էջ 472—474): Այլևս տարակույս չի մնում, որ անհայտ մատենագիր-թարգմանչի ձեռքի տակ եղել է ոչ թե սոսկ ս. Գրիգորի Վարդապետությունը, այլ հենց մեր այսօրվա Ազաթանգեղոսի ամբողջական Պատմությունը՝ եզրափակել հավատո հանգանակի հետ միասին: Այնպես որ, տվյալ դեպքում, որն է խնդիր չկա Վարդապետությունն Ազաթանգեղոսից անջատելու և վրացերեն Վասն հաւատոյ-ի հետ առանձին հաւարարելու համար: Այս պարագան ինքնին լիովին բավական է՝ հիմնովին հերքելու Պ. Մուրադյանի վարկածը և Վասն հաւատոյ-ն Վարդապետության նախաբանագիր և սկզբնաղբյուր հռչակելու նրա փորձը:

Պ. Մուրադյանը, առանց որևէ հիմքի, անվերապահ հայտարարում է, թե «Միջնադարյան վրացի անհայտ թարգմանիչը չէր կարող Վարդապետություն-ից բաղադրողն ինքը լինել, քանի որ այդ դեպքում կպահպանվեր բնագրի հերթականությունը կամ նրա արձագանքը [?]» (էջ 75), Բայց եթե մի վարկյան, և միայն մի վարկյան, ընդունենք, որ Վարդապետությունից առաջ յուրություն է ունեցել ինչ-որ Վասն հաւատոյ, ապա դրանից չի՞ հետևում արդյոք, որ խառնիխուռն և կամայական կերպով բաղադրելու պատիվն այս անգամ ստիպված պետք է վերադրենք ս. Գրիգորի Վարդապետության հեղինակին, որը, իբր, ենթադրյալ Վասն հաւատոյ-ից բաղմամբով պարբերություններ ու հատվածներ քաղել և, միտումնավոր կերպով՝ ետ ու առաջ դասավորելով, կցմցել է իրար: Եվ իսկապես, երկուսից մեկը՝ եթե Վասն հաւատոյ-ի անհայտ մատենագիրը չի խառնել բաղադրած հատվածները, ապա այդ դեպքում՝ խառնաբաղ անողը Վարդապետության հեղինակն է:

Ինչն է ստիպում մեր աղբյուրագետին ընդած բանի համար Վարդապետության հեղինակին մեղադրել վարկյալներով բանաբաղության մեջ, այն ժամանակ, երբ այդ հեղինակը չի թաքցնում, որ Գրիգոր Լուսավորիչը, տվյալ դեպքում ինքը՝ Վարդապետության հեղինակը, Աստվածաշնչից է համառոտել Վարդապետությունը, և այն էլ ոչ թե դեպից-դեպից ծայրաբաղ է արել, այլ պարզեցրած վերապատմել՝ «հստակապատում» է արել. «Ոչ եթե ծայրաբաղ ինչ արարեալ օգբանս կամ սրավարս խօսեցաւ (ս. Գրիգոր— Ա. Ս.), այլ յստակապատում արարեալ ուսուղանէր ամենեցուն. ի սկզբանց անտի սկիզբն արարեալ, յաշխարհահամար յաշխարհապատում արարելու է՛նէ՛ն անտի, մինչև ի բուն սրբոցն պատգամախօսացն Աստուծոյ, [...] Եւ զարանցն աստուածասիրաց ըստ քրիստոսաւանդ հրահանգելոցն ի ճշմարտութեան, զայդ իւրաքանչիւր աստուածամուկս կենօք և վաստակասէր հոգեւոր վարուք իւրովք, հանդերձ վկայութեամբ զմի մի որ ի նոցանէ առանձինն յականէ յանուանէ ծանուցանէր» (§ 723—724): Ավելի վաղ, Առաջին գրքի վերջավորության մեջ ևս (§ 252) ս. Գրիգորն իր շուրջը խոնված հայ բաղմունքները խոստանում է պատմել աշխարհի արարչագործությունից մինչև Աստծո Որդու երկրորդ փառավոր զաւաթում ու ահեղ դատաստանը, և դրանով իսկ ընթերցողը դուրսով պատկերացում է կազմում նրա առաջիկա Վարդապետության թե՛ նյութի ու ծավալի և թե՛ բուն աղբյուրի մասին. «Սկիզբն արասցուք ձեզ պատմելոյ վասն արարչութեանցն, թէ զի՛արդ բարի աշխարհս ստեղծաւ ի բարեբարէ անտի, թէ զի՛արդ վարեցան կարգք աշխարհիս [...] թէ զի՛արդ եկն Որդին Աստուծոյ մարմնով յաշխարհ անարդութեամբ. թէ զի՛արդ գալոց է ի վախճանի նովին մարմնով և փառօր Հօր, և վասն լինելոց բարեացն և հանդերձեալ դատաստանին. [...] Զայս ամենայն կարգաւ մի ըստ միոյն ոճով պատմեցից» (հմտ. նույն միտքը նաև § 257):

Եվ իբրեք, երբ համեմատում ենք այս ծրագրային հավաստումները բուն Վարդապետության ընդգրկած նյութի հետ, պարզ է դառնում, որ նրա հեղինակը, լիովին կատարել է իր խոստումը՝ մեղ իբրև Գրիգոր Լուսավորչի Վարդապետություն ներկայացնելով խիստ հակիրճ ամբողջ Հին և Նոր կապարանները՝ սկզբից մինչև վերջ. «Ի սկզբանցն մինչև ի վախճան՝ զամենայն պատմեցաք ձեզ» (§ 716),— ասում է ս. Գրիգորը Վարդապետությունն ավարտելուց հետո. այլուր՝ Վարդեցաք ի ձեր լսելիս զսուրբ հաւատս ճշմարիտս, որ յայտ յանդիման վարդապետեցին ձեզ Գիրք սուրբք՝ [...] և աւետարանեցաւ սրբովք մարգարէիւր և առաքելովք, և տուաւ ձեզ հաստատութիւն հաւատոց» (§ 361, տե՛ս նույն միտքը նաև § 389): Իհարկե, շարադրման ընթացքում, ս. Գրքի տվյալ տեղին կամ այլաբանությունը բացատրելու համար հարկ է եղել օգտագործել նաև եկեղեցու հեղինակավոր հայրերի մեկնություններ, այդ թվում և Գր. Լուսավորչի Հաճախապատում ճառերը: Ծիշտ է, մեր ձեռքը հասած Վարդապետության մեջ (սկսած § 514-ից) ի հայտ է գալիս Հոփփսիմյանց նահատակների թեման, բայց դա այլ խոսակցության առարկա է: Վար-

դասակարգումը ոչ առ ինչ է, եթե ոչ քարոզության նպատակով համառոտված առձեռն Աստվածաշունչ, որը սկսվում է աշխարհաստեղծումից (Աբարեալ [Աստուած] զերկինս խորանարդ հաստայարկ, և զերկիր թանձրայտակ...» — § 259) և ավարտվում առաքելոց ընդհանրական թղթերի վկայություններով (տե՛ս § 700—714) — այն ժամանակ նոր կտակարանի վերջին «Յայտնութիւն Յովհաննու» դիրքը դեռևս կանոնական չէր համարվում։ Ազգաթանգեղոսն ասում է (§ 722), թե ս. Գրիգորը հնձանի առաջ խոնված ժողովրդին Վարդապետությունը քարոզեց 65 օրում — ինչո՞ւ, — որովհետև V դ. սկզբին կանոնական ճանաչված Հին և նոր կտակարանները բաղկացած էին 65 մասից։ Սրանով էլ ակնարկվում է, թե ս. Գրիգորի Վարդապետությունը շարադրված է Աստվածաշնչի միայն կանոնական գրքերի հիման վրա։ Լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրա հեղինակը ոչ այլ ոք է, քան Մեսրոպ Մաշտոցը։ Թվում է, թե Վարդապետությունը լիարժեք շարադրման և հեղինակի մասին մենք նույնիսկ որոշակի ակնարկ ունենք հենց Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ։ Պատմահայրը վկայում է, թե Մեսրոպն Ասորիքում հայերենի փոխադրեց եբրայական Հին կտակարանի բոլոր քսաներկու հայտնի գրքերը և նոր կտակարանը։ Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն, և զնոր կտակս յեղու ի հայ բանս¹⁷։

Բանասերներից Ստ. Մալխասյանցը և ուրիշներ մերժում են այս վկայությունը՝ իբրև Մ. Խորենացուն անհարազատ ընդմիջարկություն, որ բնագրի մեջ է մուծվել ձեռագրի լուսանցքից¹⁸։ Իայց, ըստ երևույթին, այլ կերպ պետք է հասկանալ այդ տեղը։ Մաշտոցը, իրոք, չէր կարող իր երկու աշակերտների հետ միասին կարճ միջոցում թարգմանել ամբողջ Աստվածաշունչը, այլ համառոտել և ամփոփ շարադրել է աստվածային ավանդությունները, Ազգաթանգեղոսի խոսքով ասած՝ «օտակապատում է արել աշխարհապատում արարչագործությանց ակտած միևնույն աստծո պատգամախոսները (իմա՝ մարգարեները) և Քրիստոսի ավանդները հրահանգող ալբերը (իմա՝ առաքյալները)» — սա էլ հենց Հին և նոր կտակարանների ծավալն է, որ համառոտորդ Հայաստանում քրիստոնեության առաջին տարածողի անունով անվանել է Գր. Լուսավորչի Վարդապետություն (ուսմունք), որը և հայ նորաստեղծ դպրության շրջանում պետք է ծառայեր իբրև քարոզչության համար նախատեսված մատչելի և ամփոփ ձեռնարկ։ Այլ կերպ չի կարելի մեկնաբանել Մ. Խորենացու վկայությունը։ Խոսքն այստեղ Աստվածաշնչի ուղղակի թարգմանությունը չի կարող վերաբերել նաև այն պատճառով, որ Պատմության հետագա շարադրանքում պատմահայրը երկու անգամ անդրադարձել է Աստվածաշնչի բուն հայերեն թարգմանության խնդրին։ Նա վկայում է, որ երբ Մեսրոպը Աղվանշում նշանադրեր ստեղծելուց հետո վերադարձավ Հայաստան, մեծն Սահակին գտավ զբաղված (Սուրբ Գրքի) քարգմանությամբ՝ ասորականից, հունարեն լիներու պատճառով (Խոր. Գ. ԾԳ, էջ 329), իսկ Եփեսոսի ժողովից հետո (431 թ.) մեծն Սահակն ու Մեսրոպը նորից քարգմանեցին մի անգամ արդեն փութալեալի քարգմանվածը՝ նորագելով Սուրբ Գրքի ստույգ օրինակների հիման վրա (Խոր. Գ. ԿԱ., էջ 343)։ Ուշագրավ է, որ վերջին երկու դեպքում Խորենացին գործածում է քարգմանություն, քարգմանել, իսկ նախորդ դեպքերում՝ հեղուկ, փոխել։ Այն հանգամանքը, որ մեր ձեռքի տակ այսօր փաստացի առկա է Վարդապետությունը՝ իբրև Աստվածաշնչի համառոտում, միանգամայն վավերական և անձեռնմխելի է դարձնում Մովսես Խորենացու հիշյալ վկայությունը, որ V դ. սկզբ-բնի, Աստվածաշնչի իրականաբար թարգմանությունից անկախ, Մեսրոպ Մաշտոցը, իրոք, ամփոփ շարադրել է Հին և նոր կտակարանները և Լուսավորչի անունով նվիրագործված այդ համառոտ

¹⁷ «Մ ո վ ս ի ս ի Խ ո ռ Ե ն ա ջ ո յ Պ ա տ մ ո թ ի ն հ ա յ ո ջ», Տիգրիս, 1913 թ., Գ. ԾԳ, էջ 327։ Նույն տեղեկությունը Խորենացուց առնելով հաղորդում է Փոքր Կորյունը՝ «Եւ իսկոյն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի բովանդակեալ զքսան և երկուս յայտնիսն, զՀին կտակարանսն յեղու ի հայ բանս (Կ ո ռ Ի ւ ն, Պ ա տ մ ո թ ի ն վարուց եւ մահվան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, վենետիկ, 1894, էջ 19)»։

¹⁸ Ստ. Մալխասյանցը գտնում է, թե այստեղ Խորենացու խոսքն անկապ է, այնպես թայն էլ չի հարմարվում (Մ. Խ ո ռ Ե ն ա ջ ո յ ի, Հայոց պատմություն, Երևան, 1961, ծանոթ. 187)։ Մինչդեռ «Եյեղու» Խորենացու հարազատ ոճն է և «Հայոց պատմության» մեջ գործածված է մի քանի անգամ՝ միշտ էլ փառազրել իմաստով։ Այսպես, Պատմության հենց սկզբում պատմահայրը հաղորդում է, թե Հունաստանի անվանի և գիտուն բազմաթիվ մարդիկ հոգ տարան զգիր դիանացն ալլոց ազգաց թագավորացն զմեհենիցն յեղու ի յոյն բանս — (Ա. Բ., էջ 8)։ Բարդաթան Անի ամրոցում ընթերցեց մեհենական պատմությունը և իր կողմից էլ ավելացնելով. «Բիսիսաց զամենայն ի լեզու ասորի, օր և ապա անտի յեզու ի յոյն բանս» (Բ. ԿԳ, էջ 201)։

դոյթյան միասնութեան վերաբերյալ, որոնք գրեթէ ամբողջութեամբ համապատասխանում են Վարդապետության 362 և 366 պարբերություններին: Վասն հաւատոյն-ի V, 1, VI, 1—2 և VII հատվածները ներկայացնում են Ազաթանգեղոսի № 9, 10, 11 և 18 հավատամքները՝ նվիրված սուրբ Երրորդության առանձին անձների բնորոշմանը: Ժիշտ է VI, 2 հատվածում²¹ բացակայում են 11-րդ հավատամքի սկիզբն ու վերջը՝ «Եւ զԲանն Աստուած Որդի՝ ծնունդ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս, [...] և նոյն ծնունդ՝ ի կուէն մարմնով ծնեալ ի վախաւանիս (Ազաթ., էջ 473), բայց անհայտ մատենագիրը դրանք օգտագործել է IX, 2 հատվածում՝ «Եւ Բան, աստված՝ ծնեալ Հորից, նա՝ առաջնական ամենայն հավիտենականաց, [...] ու ժամավարտին ծնվեց սուրբ կույսից մարմնով: Այս հավատամքներին հաջորդող մնացյալ ամբողջ նյութը բովանդակում է Աստուծո Որդու ծնունդը, սուրբ Հոգու գալուստը և քարոզչական հորդորները: Այսպիսով, տեսնում ենք, որ Վասն հաւատոյն-ն ամբողջովին կառուցված է Ազաթանգեղոսի Պատմության եզրափակիչ հավատամքների վրա՝ ուղեցույց ունենալով այդ կանոն-սահմանումները, որոնք ծառայում են մի տեսակ կանխադրույթ՝ հետագա շարադրանքի համար, իսկ մնացած նյութն ընտրված է այդ հավատամքների բովանդակության համապատասխան և հավաքված, ինչպես բուն ս. Գրիգորի Վարդապետությունից, այնպես էլ Ազաթանգեղոսի Առաջին և Երրորդ գրքերում եղած ս. Գրիգորի քարոզներին:

Ինչպես ասվեց, Ժ. Գարիտը մեծ մասամբ ճշգրիտ հայտարարել է Ազաթանգեղոսի զուգահեռ պարբերությունները Վասն հաւատոյն-ի ընթացում: Այսուամենայնիվ, կարելի է որոշ լրացումներ և ուղղումներ կատարել նրա կազմած համեմատական տախտակում: Այսպես, Վասն հաւատոյն-ի II, 2 հատվածն բոտ Գարիտի բաղված է Ազաթանգեղոսի § 355-ից, բայց դա միայն մասամբ է ճիշտ. իրականում, այստեղ անհայտ մատենագիրը իրար է կցել քաղվածներ Ազաթանգեղոսի Ա գրքի 253—254, 309, 355 պարբերություններից: Ընթերցողն ինքը կարող է համոզվել դրանում. ահավասիկ՝

Վառն հաւատոյ

Ազաթ.

II, 3. [253]. Սակայն այսքանը գոնե հավատում ենք ու դիտենք, որ նա է ճշմարիտ աստված [254] և ոչ թե՛ ինչպես կկարողանա մեկը պատմել աստուծո [մասի]ն, [309] որը ամենայնիվ լույս է, ամենայնի լսող, ամենայնի տեսող, ամենայնի՝ ինչքան ինքն[ություն] կա. ամենայն զորություն է, ամենայն իմաստություն, հոգի կենդանի, հուր կիզիչ, [355] անշարժի ու անփոփոխ, փառք անպատմելի, անբաղ զորություն, հարստություն, գեղեցկություն, [ան] նման, զարմանալի, անհասանելի մտքերին ու խորհուրդներին, զուրա ամենայն խոսքից: Ո՛չ աչքերի տեսողությունը, ոչ ականջների լսողությունը, ոչ էլ սրտի զատումները կարող են հասնել՝ [...] [և այլն, մինչև § 355-ի վերջը]:

§ 253. Քանզի գիտեմք, թե՛ նա է ճշմարիտ Աստուած:

§ 254. Այլ ոչ եթէ զանհաս ընութենէն կարիցէ որ ճառել, և որպէս էն՝ զայն կարիցէ որ պատմել:

§ 309. Աստուած, որ ամենայնի լույս է, ամենայնի լուր է, ամենայնի տես է, ամենայնի բան է, ամենայնի զօրութիւն է, ամենայնի իմաստութիւն է, հոգի կենդանի, հուր կիզելւոյ,

§ 355. Անթիւ և անփոփոխ է, փառք անպատում, զօրութիւն անբաւ, գեղ աննման զարմանալի, անհաս մտաց և խորհրդոց, անխօս լեզուաց, անամփոփ խորհրդոց, արտաբոյ քան զամենայն ճառս. ոչ ականատես և ոչ ունկառ լուեալ, և ոչ կարծիք սրտի կարեն հասանել [...]:

III, 2 հատվածը Ժ. Գարիտը նույնացրել է միայն Ազաթանգեղոսի 254 և 258 պարբերությունների հետ. մինչդեռ այստեղ քաղվածներ կան նաև Ազաթանգեղոսի 355, 330, 326 և 309 պարբերություններից:

21 VI, 2 հատվածում՝ «Եւ ծնեալ Որդին՝ միածին, առանց աղաղալոյսան, առանց ժամանակի, Եւնեառեի, առանց բաժանման...» — առանց արարչության — ուղղում եմ՝ անկիզբ. տ. 356-րդ լատինական տեքստում (Le Museon, p. 133) — բառացի նշանակում է՝ առանց սկզբի, «sine initio», ինչպես թարգմանել է Ժ. Գարիտը, որ ճշտիվ համապատասխանում է Ազաթ. 11-րդ հավատամքին՝ «...առանց սկզբան ժամանակի. անճառ, առանց բաժանելու...»:

Համեմատենք՝

Վասն հասկաց

111, 2. [§ 355] <Աստված> անտեսանելի է սրտմտություններին (?)²² և [§ 330] անորոշելի՝ նրա տիրություն էությունը, + [§ 326] ամենայն անկարելիների հանդեպ կարելություն կա նրա մոտ + [§ 309] Այլ ինքն է ցույց տալիս այնքան, որքան որ կարող են տեսնել:

Նշենք ևս ազաթանգեզյան մի քանի տեղիներ, որ ցույց չեն տրված Ժ. Գարիտի զուգանշած հատվածներում (տե՛ս նրա Համեմատական տախտակը):

Վասն հասկաց

X, 5. Եվ ոչ թե [աստվածությունը] տեղից տեղ է փոխվում, որով ամեն ինչ է լեցուն և հատուկ է բոլորին:

X, 9. Ուստի Սաղմոսարանը ներբողյան է ձեռնում նրա [Աստուծու Որդու] բնությունը, թե Վեաշ քան զարուսեան և զև անուն նորայ և օրհնեսցին ի նա ամենայն ազգք երկրի: Այս խոսքերով նրա մարմնավոր ծնունդն է մեղ պատմում և միաժամանակ՝ նրա աստվածությունը ցույց տալիս, որ ասաց. «յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ»:

X, 11. Եթե Եվայի պատճառով անհիմն կանանց ամբողջ ցեղը, ապա Մարիամի կողմից վերուստ օրհնություն ստացավ:

XVI, 7 հատվածում նշված է § 708-ը, իրականում զրանից օգտագործված է միայն հետևյալ նախադասությունը. «Վասն այս ամենայնի աստուածախօսեալ և վարդապետեալ <Քրիստ-

Ազաթ.

§ 355. Եւ ոչ կարծիք սրտի կարեն հասանել: § 330. անշափակալ (է) բնութիւնն Աստուծոյ:

+ § 326. որով ամենայն զժողովրդն զիրականն են, և անհնարինքն հնարաւորք.

+ § 309. Աստուած [...] երեւի նոցա՝ որչափ զի նոքա կարասցեն հանգարտել նորա տեսլեանն մեծութեան:

Ազաթ.

§ 330. Եւ երբեք երբեք [Աստուած] լիւրակայան²³ սահմանացն յայլ սահմանս երեւալ զայցէ, որով լին է ամենայն:

§ 388. Եւ սաղմոսարանն երգեսց յառաջ քան զարե զանուն նորայ: Մին զմարմնածին ծնունդն պատմէ, և միւսն զԱստուածութիւնն ցոյցանէ՝ զյառաջ քան զարուսեակ ի Հօրէ ծնեալ:

§ 79. Զի զոր օրինակ ի ձեռն կուսին առաջնոյ Եւայի մահ եմուտ յաշխարհ՝ սոյն օրինակ և ի ձեռն այսր կուսի (Մարիամի) կեանք մտցեն յաշխարհ: Տե՛ս նաև § 684. Զի և կանայք օրհնեցան վասն կուսանին ծննդեանն որ ի նոցանէն:

²² Սրտմտություններին ուղղում էմ՝ սրտի դատողությամբ, ինչպես հին վրացերեն բնագրում է ժողովրդի ճշմարտացի («Le Museon», էջ 128, տող 14), որ ճշտիվ համապատասխանում է Ազաթանգեզյանի կարծիք սրտի խոսքին (§ 355): Ի. Վ. Աբուլաձեի «Հին վրացերեն լեզվի բառարանը» (Թբիլիսի, 1973, էջ 260) ժողովրդի բացատրում է զգայմունք, միտք, դատողություն, ուրեմն ամբողջ արտահայտությունը պետք է հասկանալ՝ (Աստված) անտեսանելի է սրտի զգացմունքին, սրտի դատողությամբ, լատ. Invisibilis est cogitatione cordibus, ինչպես թարգմանել է Ժ. Գարիտը («Le Museon», p. 129) մինչդեռ սրտմտություն նշանակում է բարկություն, ցասում, նույն արտահայտությունը. միայն այլ հոլովով և թվով՝ ծոցոցն ճշմարտացի («Le Museon», էջ 128, տող 9—10) հանդիպում է և «Վասն հաւատոյ»-ի II, 3 հատվածում և դարձյալ համապատասխանում է Ազաթանգեզյանի կարծիք սրտի արտահայտությանը, որի գիմաց Գարիտն ունի՝ cogitationes cordis («Le Museon», p. 128), և այսուհի արդեն հայերեն չիշտ է թարգմանված «սրտի դատումները»:

²³ Յիւրակայան առաջարկում եմ ուղղել յիւրական, այսինքն՝ իր, սեփական, ինչպես հաստատում են հետևյալ օրինակները. «Եւ գումարեաց (թագաւորն յոմաց) ի ձեռս նորա (Տրդատայ) զօրս բազումս յօգնականութիւն նմա և արձակեաց յիւրական աշխարհն Հայոց» (Ազաթ. § 46), «Չեն, ասէ, այդքն յերկրիս յիւրական տուրքք ձեր, այլ ի կատարս բարձրութեան երկնից յանսխալ եւ յանխրէպ գանձարանին» («Վանքն Սահակայ Պարթևի», ՄԱ.— «Վանքնագիրք հայոց», հ. Ա, Երևան, 1964, էջ 413):

աշակերտացն իւրոց: Մնացյալն ընդհանուր շարադրանք է այլ պարբերություններից, ինչպես՝ § 713:

Վասն հաւատոյ

Ազաթ.

XVI, 7. Ուստի նվազ պատճառով՝ այսուստ երկինք մատուցեցին իրենց հավատը՝ սուրբ գործով հանդերձ:

§ 713. Ձի վասն փոքր պատճառանաց աստի՛ լիբր ընծայելոց՝ անշափ բարեաց պատրաստական հատուցանող գտանիցի:

...

Սակայն առաջ անցնենք: Պրոֆ. Ժ. Գարիտի կազմած համեմատական տախտակից դժվար չէ համոզվել, որ «Վասն հաւատոյ»-ի մի շարք հատվածներ, ինչպես՝ V 2, VI 3, VIII 1—3, IX 1, 3, X 10, XIII 1—2, XIV 3, XV 3, XVII 4—5, XVIII 1—4, XIX 1, մնում են դեռևս չհայտնողված և դրանց դիմաց չկան սկզբնաղբյուրի հղումներ. ականերն է, որ բելգիացի արևելագետը դրանք Ազաթանգեղոսի ամբողջական Պատմությունն է՝ Գրիգոր Լուսավորչի Վարդապետության հանդերձ, այլ ոչ թե հակառակը: Այնպես որ, Պ. Մուրադյանի վարկածից մնում է միայն ոչինչ: Ինչպես Գրիգոր Լուսավորչի Վարդապետության մեջ է ասված՝ «Զսգան զհետ սչնչի, և գտին զուրիշն»:

Դեռևս Բոնվեյլը կարծիք էր հայտնել, որ «Վասն հաւատոյ»-ի XII, 2 և XIII 1—2 հատվածներում արտահայտված հավատամքի գաղափարը առնչվում է զանազան հին հավատո հանգանակների հետ, ինչպես՝ Նպիտանի երկար բանաձևը, Աթանաս Ալեքսանդրիացուն սխալմամբ վերագրված «Մեկնություն հանգանակի»-ն՝ «Ἐρμηνεία εἰς τὸ σὺμβολον», Բարսեղ Մեծին սխալմամբ վերագրված «318 սուրբ հայրերի հավատքի բացատրությունը»՝ «Ἐκθεσις πιστεως αἰωνοῦ τριακοσίων καὶ οὐκ πατρων»՝ հին հայկական պատարագի և խոստովանության հավատամքները: Չնայած այս կարևոր դիտողությանը, Բոնվեյլն ինքը սահմանափակվել է սոսկ դավանաբանական սկզբունքների ձևակերպումների ընդհանրությունը մատնանշելով, և խնդիրը փաստորեն հարկ եղած չափով չի բացահայտվել ինչպես նրա կողմից, այնպես էլ հետագայում: Շարունակելով նշված ուղղությամբ պրպտումները եվրոպական բանասիրության և հայ մատենագրության մեջ, մենք շուտով կանգնեցինք մի նոր իրողության առաջ: Ինչպես հաջողվեց պարզել, «Վասն հաւատոյ» դավանաբանական երկը կազմող անհայտ մատենագիրն օգտվել է ոչ միայն Ազաթանգեղոսի Պատմությունից, այլև մի երկրորդ հայերեն սկզբնաղբյուրից: Դա IV գ. երկրորդ կեսի հույն աստվածաբան Նվազր(իոս) Պոնտացի վանականի «Հաւատք որ ի Նիկիայ» կոչված մեկնության հայերեն թարգմանությունն է՝ 26, Մեկնության հունարեն բնագիրը մեր բա-

24 VI, 3—Ազաթ. § 706. «Որում և աւետարանիչն Յովհաննէս տեսնալ վկայեաց, թէ «ԶԱստուած ոչ ոք ետես երբեք, բայց միածին Որդին որ է ի ծոց հօր՝ նա պատմեաց», XIII, 2— Ազաթ. § 390. «Վասն մերոյ կենաց մարդացաւ և մարդակերպ շրջեցաւ [...] և ել նստաւ ընդ աջմէ ծնողին իւրոյ Աստուծոյ», XVIII, 4— Ազաթ. § 390. «Անդ յարքայութեանն զձեզ վայելեցուցանել յանաց և յերկնստոյ ուրախութեանն: Նմա փառք ամենատեառնն»:

25 G. Bonwetsch, Նշվ. աշխ., էջ 8, ինչպես նաև 25—27 էջերի ծանոթագրությունները: Նշված հանգանակները տե՛ս «Bibliothek der Symbole und Glaubensregeln der alten Kirche», herausgegeben von Dr. August Hahn, Breslau, 1897, S. 135—137, 137—138, 308—310, 151—156. Սերբոսի Պատմության մեջ (հրատ. Գ. Արզարյանի, Երևան, 1979, էջ 156—157) Հոռոմոց Կոստանդին թագավորին ներսես կաթողիկոսի հղած պատասխան թղթում բերված հանգանակը, որ ավանդաբար վերագրված է 325 թ. Նիկիական ժողովին և ըստ այսմ վերնագրված՝ Հանգանակ Նիկիական ժողովյան, իրականում Աթանաս Ալեքսանդրիացուն վերագրված վերահիշյալ մեկնություն հանգանակի-ի հայերեն հարազատ թարգմանությունն է:

26 Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ, Վարք եւ մատենագրութիւնք (այսուհետե՛ս՝

նասիրության մեջ կորած էր համարվում: «Յոյն. բնագիրը հիմայ մէջտեղ չկայ»,— գրում է Հ. Գաթրոնը²⁷ հավատո հանգանակին նվիրված ուսումնասիրության մեջ, իսկ Բ. Սարգիսյանը, որ հատուկ զբաղվել է նվագը Պոնտոցու մատենագրությամբ, մատնանշում է. «Թեպետև Հույն բնագիրը տակավին կը մնա հետակորույս, սակայն անոր երբեմնի գոյությունն ինձ անժխտելի կ'երևի»²⁸: Չնայած այս պատկանելի հավաստիացումներին, մեզ հաջողվեց ի հայտ բերել նաև նվագը Պոնտոցու «Հաւատք» որ ի նիկիայա մեկնության հունարեն բնագիրը, որ անհերքելի կովան կարող է ծառայել «Վասն հաւատոյ»-ում օգտագործված հայերեն սկզբնաղբյուրը բացահայտելու համար: Այն տպագրվել է 1784 թ. Բոննում²⁹, որից և արտատպվել է Մինյի հրատարակած «Patrologiae graecae» մատենաշարում (հ. XXVIII, սույն 1637—1644):

Նվագը Պոնտոցու մեկնությունը, հավասարապես և նրա հունարեն անանուն բնագիրը ըստ բովանդակության, բաղկացած է երկու մասից: Առաջին մասն սկսվում է 325 թ. տիեզերական խռովի ժողովի ընդունած բուն նիկիական հանգանակի բառացի քաղումով՝ «Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ»³⁰ (տե՛ս սույն հոդվածում՝ էջ 75, հատված «1»), որին կցված է նույն հանգանակի ավելի ընդարձակ վերաշարադրանք՝ «Այլ զհերեսիոտութիւնն Սարելլեայա ձկնվածքով»³¹ (տե՛ս սույն հոդվածում՝ էջ 76, հատված «2»), մեկնողական բնույթի լրացումներով է ժամանակին տարածված սարեղյան, փոտինյան և արիոսական աղանդների դեմ ուղղված բանադրանքներով: Ահա այս շարադրանքը, որին հունարեն և հայերեն ձեռագրերում նախակըցված է նիկիական հանգանակը, իբրև մի ամբողջություն, հայ բանասիրության մեջ ստացել է նվագրի հանգանակ անունը³², որի հունարեն մի խմբագրությունն է վերահիշյալ «Հաւատքի» բացատրությունը: Բանն այն է, որ հունարեն գրեթե բոլոր հայտնի ձեռագրերում «Հաւատքի» բացատրությունը հեղինակ չունի և միայն Վենետիկի Մարկոսյան գրադարանում պահվող XIV դ. մի գրչագիր ժողովածուում («Codices graeci Bessarionici») վերագրված է Բարսեղ Մեծին (Կեսարացուն): Այն առաջին անգամ հրատարակել է նորվեգիայի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր Կասպարին³³: Դեռևս 1869 թ. Կասպարին դտնում էր, թե «Հաւատքի» բացատրությունը չի կարող Բարսեղ Մեծին պատկանել: Նվ երբ 1893 թ. Վիեննայում լատիներեն թարգմանությամբ լույս տեսավ Հ. Գաթրոնի «Հանդանակ հաւատոյ»-ն և Միսթարյանների ձեռագրատան երկու գրչագրերի հիման վրա եվրոպական բանասերների ուշադրությանը ներկայացվեց նվագրի հանգանակը³⁴, գերմանացի հետազոտողներ Կատենբուշը³⁵ և ապա Ֆլգուստ Հանը³⁶, միանգամայն արժանահավատ համարելով հայկական աղբյուրների հաղորդումը՝ հակվեցին այն կարծիքին, որ իսկապես նվագը կարող է լինել «Հաւատքի» բացատրության հեղինակը: Ցավոք, այս կարևոր հետևությունը ցարդ ոչ ոք ուշադրություն չի դարձրել:

«Հաւատք» որ ի նիկիայա մեկնության երկրորդ, ավելի ծավալուն մասը՝ «Եւ զնոյն կարդ հաւատացելոց՝ մանավանդ միանձանց» — «Επει δὲ ὁ β' μέρος τῶν ὑμῶν τοῦ αὐτοῦ καὶ ἐκείνου τοῦ αὐτοῦ» սկսվածքով³⁷ հոդեղան կանոնական

նագր), թարգմանելով ի յուն է ի հայ բարբառ ի հինգերորդ դարու, աշխատասիրութեամբ և ծանոթութեամբ ի լոյս ընծայեաց Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907, էջ 134—141:

²⁷ Բ. Գաթրոն, Հանգանակ հաւատոյ, որով վարի Հայաստանեայց եկեղեցի, (այսուհետև՝ «Հանգանակ հաւատոյ»), Վիեննա, 1891, էջ 22:

²⁸ Ն. ա գ ր, էջ 134, տողատակի ծանոթագրությունը:

²⁹ «Graeci codices manuscripti apud Nantos patricios Venetos asservati», Bononiae, 1784, p. 107 sq.

³⁰ Ն. ա գ ր, էջ 134—136, Migne, T. XXVIII, col. 1637 A—B.

³¹ Ն. ա գ ր, էջ 136—137, Migne, T. XXVIII, col. 1637B—1637B.

³² Նվագրի հանգանակի մանրամասն քննությունը կատարել է Հ. Գաթրոնը (տե՛ս «Հանգանակ հաւատոյ», էջ 20—26):

³³ «Quellen zur Geschichte des Taufsymbols und der Glaubensregel», herausgegeben, und in Abhandlungen erläutert von Dr. C. P. Caspari, Christiania, 1869, S. 4—7).

³⁴ J. Catèrgian, De fidel Symbolo, quo Armeni utuntur observationes. Vienn., 1893, p. 21 sq.

³⁵ Kattenbusch, Das apostolische Symbol I, Leipzig, 1894, S. 319.

³⁶ August Hahn, Bibliothek der Symbole, S. 309, (տողատակի ծանոթագրությունը):

³⁷ Ն. ա գ ր, էջ 137—141 — Migne, T. XXVIII, col. 1639B—1644B. Հայերեն թարգմանությունը զգալի լափով համառոտված է:

հրահանգներ և հորդորներ են՝ ուղղված առավելապես միանձն հգնավորներին: Եվադրի այս մեկնությունը, ինչպես պետք է ենթադրել, հայերեն է թարգմանվել V դ. սկզբին և հայ դպրության սկզբնավորման շրջանի հնագույն թարգմանություններից մեկն է, որի ապացույցն է առաջին հերթին Հին կտակարանի եբրայական որոշ անունների առարաձի և ոչ հունաձև տառադարձումը, ինչպես Յեշով փոխանակ Յեռու, Շմուել փոխանակ Սամուել: Ինչպես Հ. Գաբրիելյանն է նկատել Եվադրի ոճի մասին. «Թարգմանության լեզուն V դարու առաջին կեսին նկարագրական եղած լեզուն է՝ որն որ անկէ ետքը աննմանելի մնացած է»³⁸:

Եվադրի մեկնության մի բավական ընդարձակ հատված քաղաքոված է վրացերեն Վասն Հաւատոյն-ի XII, 1—2 և XIII, 1—2 զխաճամարներում: Քանի որ Վասն Հաւատոյն-ն դավանություն է սուրբ Երրորդության մասին, այս պատճառով էլ նրանում անհայտ հեղինակն օգտագործել է միայն Եվադրի մեկնության առաջին մասը, այսպես կոչված Եվադրի ճանգամադր: Բնականաբար հարթ է ծագում, թե ո՞ր լեզվից և ի՞նչ սկզբնաղբյուրից է օգտվել Վասն Հաւատոյն-ի հեղինակը՝ Եվադրի հունարեն բնագրից, թե՞ հայերեն թարգմանությունից: Բարեբախ՝ քաբար, հայ մատենագրության մեջ Եվադրի հանգանակն ավանդված է ոչ միայն այդ հեղինակի բուն երկերում, այլև մի կողմնակի. հնագույն հայերեն վավերագրում— դա այն դավանաբանական պատասխան թուղթն է³⁹, որ հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը 431 թ. Եփեսոսի ժողովից հետո հղեցին Կոստանդնուպոլսի պատրիարք Պրոկղին: Այդ պատասխան թղթի շարադրանքում, առանց վերնագրի և հեղինակի անունը հիշելու, մեջ է բերված Եվադրի մեկնության ամբողջ առաջին մասը՝ նիկիական հանգանակի հետ միասին՝ «Այլ մեք հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ սկսվածքով և «Այլ թե որպէ՛ս կամ զիսորդ, Աստուծոյ միայն է գիտել զերշնչվածքով»⁴⁰, որը, թեև որոշ լեզվաբանական խմբագրությամբ տարբերվում է Եվադրի Վասնագրի որ ի նիկիա մեկնության հայերեն թարգմանությունից, բայց իր խմբագրական հավելում-հապավումներով ճշտված համապատասխանում է նրան: Այս երկրորդ անկախ աղբյուրը միջոց է տալիս առավել համոզիչ կերպով լուծելու Եվադրի հանգանակի հայերեն և վրացերեն թարգմանությունների փոխհարաբերության խնդիրը:

Որ Եվադրի մեկնության հայերեն թարգմանությունն է օգտագործվել Հին վրացերեն Վասն Հաւատոյն-ում, հաստատվում է հայ թարգմանչի հենց այդ հավելում-հապավումներով, որոնք առնչված են հայտ ևն զայն հայերեն և Հին վրացերեն շարադրանքները հունարեն բնագրի հետ բաղդատելու: Այսպես, Եվադրի մոտ հանդիպող «Ձի միշտ Հայր, և միշտ Որդի և միշտ Հոգի աստուածնդ են. Հոգի, սուրբ կատարեալ, բարեխոս— առանց առնելոյ խոսքի առաջին մասը հայ թարգմանչի բանաձևումն է, որ առկա է նաև Սահակի և Մաշտոցի առ Պրոկղ պատասխան թղթում և զայնպես տարբեր է հունարեն բնագրից՝ 41. «ἀλλ' αἱ πατρὶς αἱ υἱὸς. ὡς προεῖπαμεν» [. . .] πνεύμα θεῖον, πνεύμα ἄγιον, πνεύμα τέλειον, παρὰ κληρὸν, ἀχρὶς τὸν» (այլ միշտ Հայր, միշտ Որդի, այսպես ենք հաստատում [. . .] Հոգի Աստծո, Հոգի սուրբ, Հոգի կատարյալ, բարեխոս, անստեղծ (թարգմանությունը մերն է— Ա. Մ.): Բացի այդ, Եվադրի վերը բերված հատվածում Հոգի առաջինը զանազան ձևերով է (տե՛ս հունարեն. բնագրի սույն ուսումնասիրության 77 էջում) մինչդեռ վրացերենը բառացի հետևում է հայերեն թարգմանությանը՝ XII, 2. «Հավիտյանս հայր, հավիտյան որդի, հավիտյանս սուրբ հոգի: Սուրբ հոգին՝ կատարյալ միշտորդ, անստեղծ: Սահակի և Մաշտոցի առ Պրոկղ պատասխան թղթում բերված հանգանակն ունի նույն ձևակերպումը և բնագրի հապավումը. «Ձի միշտ Հայր, միշտ Որդի, միշտ սուրբ Հոգին, Հոգի Աստուծոյ, Հոգի սուրբ, կատարեալ, բարեխոս, անստեղծ, անեղծ»⁴²:

Մի այլ ապացույց է. Եվադրի հայերեն թարգմանության «Ձգեցաւ [. . .] մարմին և շունչ ճշմարիտ և ոչ առ աշօք»⁴³ արտահայտության մեջ, առաջինը (առ երևույթ) վրացի թարգմանիչը

³⁸ «Հանգանակ հաւատոյն», էջ 22:

³⁹ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 9—13:

⁴⁰ Նույն տեղում, էջ 10—11:

⁴¹ C. P. Caspari, Quellen, T. II, էջ 5—6: Migne T. XXVIII col. 1638, Միսյիի առաւելած թնագիրն այստեղ ավելի հեռու է հայերեն թարգմանությունից՝ ἀλλὰ αἱ Υἱὸς συνπατρὶ, ὡς προεῖπαμεν (Այլ միշտ Որդի ընդ հոր, այսպես ենք հաստատում):

⁴² «Գիրք թղթոց», էջ 10:

⁴³ Հայերեն թարգմանում՝ «σωμα τε καὶ ψυχὴν ἀληθινὴν καὶ οὐ ὁσχεταί». Caspari, Quellen, T. II, S. 6. Մերենուի Պատմության մեջ բերված հանգանակը (էջ 157) համապատասխան տեղում ունի. «ճշմարտապէս և ոչ կարծեալ»:

ընկալել է իրրե առակօք և բոտ այսմ թարգմանել վրացերեն օճաճճ⁴⁴, այսինքն՝ առակով, որ նույնպես հաստատում է հայերենից թարգմանված լինելը: Գրիգոր Լուսավորչի Վարդապետության մեջ ևս նվազրի մեկնությունը հար և նման ասված է. «Եւ արդ՝ դու տե՛ս զճշմարիտ կերպարանս բերեալ ի սուրբ. կուսէն, և ոչ առ աշօք ինչ տեսիլս» (§ 402):

Նվազրի հանգանակի հայերեն թարգմանությունից է բաղված նաև Ագաթանգեղոսի Պատմության վերջում գետեղված և Գրիգոր Լուսավորչին վերագրվող Հավատո հանգանակի 17-րդ կանոնը. «Հաւատամք՝ և ի սուրբ Հոգին աստուածեղէն, Հոգի սուրբ, Աստուած կատարեալ, ցոռնց առնելոյ. բղխումն մշտնջենաւոր առ ի Հօրէ. որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէսն և յառաքեալսն, և էջ ի Յորդանան գետս» (էջ 473—474, հմմտ. աստ, էջ 77):

Նվազրի հանգանակը՝ լայն ճանաչում էր գտել հայ եկեղեցում՝ սկսած V դ. առաջին կեսից: Նվազր Պոնտացուն հույն և հայ մատենագրության մեջ հորջորջել են «այլ իմաստուն և՛ ճարտար», «այլ վարժ ամենայնիւ բոտ նմանութեան առաքելոցն և մարգարէիցն»: Այն հանգամանքը, որ Նվազրի մեկնությունը որոշ հունարեն գրչագրերում վերագրված է նրա ուսուցիչ Բարսեղ Մեծին, վկայում է, թե իր ուղղափառ դավանանքով նա ինչպիսի հեղինակություն և վստահություն էր վայելում հունադավան եկեղեցու շրջանում: Նվազրի ամբողջական հանգանակի մոտումը Սահակի և Մաշտոցի «Առ Պրոկղա թղթում, ինչպես և նույնի հատվածների առկայությունը Գր. Լուսավորչի Վարդապետության մեջ, Գր. Լուսավորչին վերագրված Հավատո հանգանակում և Սահակ Պարթևի «Ընդդէմ երկարեակաց նեստորականացն» դավաբանական թղթում, մի միասնական նպատակ էին հետապնդում՝ 430—ական թվերին հույն աստվածաբանի սուրբ Երրորդության դավանանքով արտահայտել հայ եկեղեցու հավանությունը Եփեսոսի ժողովի ընդունած կանոններին՝ ուղղված Կոստանդնուպոլսի բանադրված պատրիարք նեստորի դեմ, որը Քրիստոսին երկու որդի կամ երկու բնություն էր հայտարարում և այդպիսով Երրորդությունը դառնում էր չորրորդություն, ինչպես գրում է Մովսես Խորենացին. «Այլ որդի ասէր շնորհօք ի Մարիամայ, և այլ որդի ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս. որպէս զի լինել երկուս որդիս, որով Երրորդութիւնն չորրորդութիւն լինի» («Պատմութիւն հայոց», Գ, 44, էջ 342): Ամբարիշտ նեստորի հենց այդ դավանանքի դեմ էր ուղղված ագաթանգեղյան եղբայրակիչ Հավատո հանգանակի 11-րդ կանոնը, որ ասում է. «Եւ զրանն Աստուած Որդի՝ ծնունդ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս, [...] և նոյն ծնունդ՝ ի կուսէն մարմնով ծնեալ ի վախճանիս: Այս է պատճառը, որ Եփեսոսի ժողովի անմիջական արձագանքը և հակառակաստորական պայքարի դրույթները թափանցել են նաև բուն Վարդապետության մեջ. օրինակ, Եփեսոսի ժողովից հետո Կոստանդնուպոլսի Պրոկղ եպիսկոպոսը Սահակին և Մաշտոցին ուղղած թղթում գրում է. «Զի ոչ ինչ յուսմէնեմէ ծնունդն Սուրբմայ՝ է յայնմեմեմէ սկիզբն անսկզբնականին զօյնութեմ, [...] լրոտ մարմնոյն յայտնութեան, այլ ոչ եթէ ըստ աստուածութեանն ծնունդն», որին հար և նման Վարդապետության մեջ ասված է. «Զի ոչ եթէ յուսմէնեմէ ծնունդն ի կուսէն իցէ՛լ յայնմ նեմէ է սկիզբն անսկզբնեմ Թանին զօյնութեան. այլ յառաջ քան զամենայն յաւիտեանս ծնաւ ի Հօրէ, իսկ արդ վասն մեր էջ և մարմնով ծնաւ ի կուսէն» (Ագաթ. § 391. Ընդգծումը մերն է— Ա. Մ.):

Վերահիշյալ հատվածները, ինչպես և մի քանի այլ վկայություններ, թույլ են տալիս հաստատել, որ արդեն գոյություն ունեցող Վարդապետությունը վերջնական խմբագրման է ենթարկվել 431 թվի Իփեսոսի ժողովից անմիջապես հետո:

Նվազրի «Հաւատք որ ի նիկիայս մեկնության հետ ևս անանուն մատենագիրը նույն կերպ է վարվել, ինչ որ Ագաթանգեղոսի բնագրի հետ— Սարգիսոսի, Փոտինոսի և Արիոսի աղանդներին վերաբերող հատվածներից նա թողել է միայն III դ. կեսերին հանդես եկած հերձվածող Սարգիսոս Լիբեացուն ուղղված նզովքը: Հարկ է նշել, որ անանուն մատենագիրն այստեղ էլ չի թերացել իր կողմից յրացումներ անել և Նվազրի տեքստը, ինչպես Ագաթանգեղոսի դեպքում էր, ընդմիջարկել է Մատթեոսի ալիստարանի և դարձյալ Գրիգոր Լուսավորչի Վարդապետության վկայություններով, որ ստորև կառանձնացնենք շեղագրով: Կողք-կողքի գետեղէնք Նվազր Պոնտացու մեկնության առաջին մասի հունարեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը՝ նիկիական հանգանակով հանդերձ և «Վասն հաւատոյս»-ի XII—XIII գլուխները համադրենք Նվազրի մեկնության հայերեն թարգմանության հետ՝ ցույց տալու համար դրանց նույնությունը:

Հունարեն բնագրի այն հատվածները, որոնք զեղչված են հայ թարգմանչի կողմից, ինչպես և հայերեն թարգմանության մեջ եղած հավելումներն առնում ենք շրջանակի մեջ:

⁴⁴ «Le Museon», էջ 149, տող 1:

^{*} Գրք. թղթոց, էջ 6:

Ἐν ἀρχῇ ἦν ὁ λόγος· καὶ θεὸς ἦν ὁ
λόγος· γεννηθεὶς συν Πατρὶ, ὡς ἀπὸ
ἀρχῆς. Καὶ ταῦτα μὲν πρὸς τὸν Πατέρα
καὶ Υἱόν. Περὶ δὲ τοῦ αἵου Πνεύμα-
τος οὕτως πιστεύομεν· Πνεῦμα θεῶν,

πνεῦμα ἅγιον, πνεῦμα τέλειον, παρὰ-
κλήτιν· λαλήσαι ἐν νοῷ καὶ προφηταίς,
καὶ ἀποστόλοις· καταβὰν ἐπὶ τοῦ Ἰορ-
δάνην. Περὶ δὲ τῆς ἐνανθρωπήσεως τοῦ
Υἱοῦ οὕτω πιστεύομεν· ὅτι ἀνελαβεν ἄν-
θρωπον τέλειον ἐκ τῆς ἁγίας θεοτόκου
παρίας, διὰ Πνεύματος ἁγίου οὐκ ἐκ

σπέρματος ἀνδρός· σῶμα δὲ καὶ ψυχὴν ἐν
ἀληθείᾳ καὶ εὐδοκῆσει· οὕτως γὰρ ἦλθε
τέλειος, ὥσπερ τὸν ἄνθρωπον· καὶ ὅτι
ἐπαθεῖ, καὶ ὅτι ἐτάπη, καὶ τῇ τρίτῃ
ἡμέρᾳ ἀνέστη· καὶ ὅτι εἰς οὐρανούς ἀν-
ελήφθη· καὶ ἐκέλευσεν ἐν δεξιᾷ τοῦ Πατρὸς,
ἀποθεύσας τὸν ἄνθρωπον, ὃν ἔλαβεν· καὶ
ἐρχόμενον κρίναι ζῶντας καὶ νεκρούς. R¹

ὅτι καὶ πρῶτος αἱ θεῖαι Γραφαὶ λεγου-
σιν, αὐτῷ ὡστερ κτισματος το κατὰ σάρκα
καὶ πληροῦσθαι καταλαμβάνομεν. Ὅτι ἀνα-
θεματίζομεν τοῦ, μὴ ὁμολογοῦντας εἶναι
ἀνάστασιν νεκρῶν, καὶ ἅσα τὸς αἵρεσεις

Ἀνεξαμαρτίωθη δὲ καὶ ἐν τοῖς προγεγραμμέ-
νοις ἡ ἀθεὸς πίστις τῶν Ἀρειανῶν, ἐν τῇ
πιστεύειν καὶ λέγειν, γεννηθῆντα καὶ οὐ
ποιηθῆντα· αὐτοὶ γὰρ λέγουσι κτίσμα τὸν
Υἱὸν εἶναι. Πρὸς δὲ τὸ ἀνακληρῶσαι πάντα

Հոգի աստուածողէն.

Հոգի սուր կատարեալ բարեխօս.
առնեց առնելոյ, այլ էր իսկ, որ թո-
սեցաւ յօրէնս և ի մարգարէս և յառա-
քեանս, և էլ ի Յորդանան գետ. Ոյլ
վասն մարդկաբանն աստուածութեան
մղղոյ, այսպէս հաւատամք. եթէ զգե-
ցաւ զմարդն կատարեալ յաստուածածինն
Մարիամայ՝ Հոգւովն սրբով, մարմին և
չունչ ժամաբիւս և ոչ առ աշօք. գի-
տյալէս եկն կատարեալ փրկել զմարդն.
և ժշմարիւս չարչարեցաւ, և թաղեցաւ,
և յարեաւ յաւուր երրորդի, և յերկրեա
վերացաւ և նստաւ ընդ ժմէ՝ Հօր, և
գալոց է դասել զմեռեալս և զկենդանիս

7 Դառձեալ նգովեմք զԱրիոս, և զամենայն
հերեսիութիւն նոցա, որ ասեն արարած
զՈրդի Աստուծոյ:

**** Παραχλιδων (բարևխոս, միշնորդ) բառից հետո Կասպարիի հիշալ հանգանակը ափիացնում է առօրեային (անստեղծ), որի դիմաց հայերեն թարգմանությունն ունի անստեղծություն (նույն տեղում, էջ 6):

Վասն հաւատոյ

Եւագր, Հաւատք որ ի նիկիայ,
էջ 135—136

XII, 1. Եւ [նզովյալ են], ՈՐՈՆՔ ԵՈՍՏՈՎՍ-
ՆԵՅԻՆ ՆՐԱՆ [հաղակեր օձին՝ սատանային] ու
ասում են, իրրեւ բերեմնի ոչ էր որդի և ոչ իսկ
եղև մինչ ր ծնունդն, և եղև յոչնչէ և յայլ ինչ
զօրութենէ, կամ՝ յընթացս և խառնակութեամբս:

XII, 2 Այսպիսիներին նզովում է ԿԱԹՈՂԻԿԵ
ԵԿԵՂԵՑԻՆ, և Սարեղի աղանդին, որ ասում է.
Ենա ևս մեկ էա՝ Այլև մենք հորը ճանաչում ենք
հայր, որդուն՝ որդի, և հոգուն՝ սուրբ հոգի, մեկ
տերություն, մեկ աստվածություն, երեք ԿԱ-
ՏԱՐԱՆ ԱՆՆԻՆՔ

Հավիտյանի հայր, հավիտյանս
սրդի, հավիտյանս սուրբ հոգի, Սուրբ հոգին՝ կա-
տարյալ միջնորդ, անտեղծ, որը ի սկզբանե կար
և արտահայտվում էր կրոնի մեջ⁴⁵ մարգարեների
ու առաքյալների մեջ, և Հորդանանն այս կողմ
անցավ⁴⁶ ՈՒ ՎԱՅՅԵՑ ԱՍՏՄՈՒ ՈՐԴՈՒ ՄԱՐԴԵ-
ՊԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ. ԵՐՐ ԶԱՅՆ ԵԿԱՎ, ԲՈՒ ՀԱՅԴ
Է ՈՐԴԻ ԻՄ ՍԻՐԵՒԻՄ⁴⁷:

XIII, 1. Որը զգեցան [իրրեւ] մարդ կատար-
յալ աստվածածին Մարիամից՝ սուրբ հոգով, և
մարմնավոր ու շնչավոր, ճշմարիտ և ոչ առա-
կով. ուստի այսպես՝ եկավ կատարելապես աղա-
տելու մարդու:

⁴⁵ Աբուհայտովում էր կրոնի մեջ — ուղղում եմ՝ խօսեց օրեօրի մեջ՝ օրցոլա ՁԵՄԵՆԱ
ՅՈՅՆ (Le Museon, էջ 148, տող 11): Ժ. Գաբիտը հիշտ է թարգմանել՝ loquebatur in
lege (նույն աեղում, էջ 148):

⁴⁶ Ուղղում եմ՝ իլլավ Հորդանան (— ցածրամտյա՝ օտարմտյա (նույն տեղում, տող 12):
Աբուլաձեի բառարանը (էջ 85) ճանաչում է թարգմանում է Յոնյալ — իսկի, որ մի-
անգաման համապատասխանում է ավետարանի հետևյալ տեղին. Են ևտես [Յիսուս] զհոգին
Աստուծոյ՝ զի իլլանէր իրրեւ զաղանի և զայր ի վերայ նորաս (Մտթ. Գ, 16, հմտ. Մարկ. Ա. 10):

⁴⁷ Մտթ. Գ. 17: Ոստ Գաբիտի՝ Մարկ. Ա. 11:

⁴⁸ Զձ. Յաստուածածնէն:

⁴⁹ Քանի որ այստեղ եվագրը խոսում է Քրիստոսի մարդանալու, շարժարկի, խաչվելու,
հարուխյուն առնելու և երկինք վերանալու մասին, ապա անանուն հեղինակը եվագրի շարա-
դրանքին մյաջյուսել է Աղաթանգեղոսի 390 պարբերության այն հատվածը, ուր կրկնակ հոմա-
նիշներով հար և նման, թվարկվում են Քրիստոսի մարդակերպ դառնալը, շարժարկի, խաչ-
վելը, հարուխյուն առնելը ու համբառնալը Այստեղ նշմարապես հայերեն եվագրից է (ճշմար-
տիւ) և չիք հոմարենում:

⁵⁰ Մարդկանց պատվերով էր դրժում — ուղղում եմ՝ մարդու կերպարանքով էր շրջում
Ծաղտա յօցտաժո օյցցոլա (Le Museon, էջ 149, տող 3). Նույն-պատկեր, կերպարանք
(Աբուլաձե, էջ 561): Ժ. Գաբիտը հիշտ է թարգմանել՝ ad imaginem hominum versa
batur.

⁵¹ Վրացիներում բառացի — ուսում և խմում էր՝ ինչպես մենք: Այդպես է և Աղաթանգե-
ղոսի մոտ՝ եկեր իրրեւ զմեզ և արք:

Այլ որ ասեն, թէ էր երբեմն՝ զի չէր իսկ, և
յառաջ քան զծնունդն զի չէր իսկ, և ի շնութենէ
իսկ եղև, և յայլմէ իմեմնէ զօրութենէ կամ ի
դոյութենէ, կամ անցանելով է կամ եղծանելով է,
զայնպիսին նզովեմք: Այլ զհերետոստութիւնն
Սարէլլեայ՝ որ ասէ եթե նոյն իցէ Հայր և Որդի
և Հոգին սուրբ. այլ զՀայր գիտեմք մեք Հայր, և
զՈրդի՝ որդի, և զՀոգին սուրբ՝ հոգի մի թագա-
ւորութիւն, մի տէրութիւն, մի զօրութիւն, մի աստ-
վածութիւն: Դարձյալ նզովեմք զՓոտիսեայ հա-
ւատսն, որ ասեն՝ եթէ ի Մարիամայ է ծնեալ
Յիսուս: Եւ ոչ էր երբեմն, զի չէր Որդի. զի միշտ
Հայր, և միշտ Որդի, և միշտ Հոգի աստուածե-
ղէն. Հոգի սուրբ կատարեալ, բարեխօս. առանց
առնելոյ, այլ էր իսկ. որ խօսեցաւ յօրէնս և ի
մարգարէս և յառաքեալս, և է՛շ ի Յորդանան գետ:

Այլ վասն մարդկախառն աստուածութեան
Որդւոյ այսպէս հաւատամք. եթէ զգեցաւ զմարդն
կատարեալ յաստուածածինն⁴⁸ Մարիամայ՝ հոգ-
ւովն սրբով, մարմին և շունչ ճշմարիտ և ոչ առ-
աջօք. զի այնպէս եկն կատարեալ փրկել զմարդն.

Ազգաբ. § 390

ՄԱՐԴ, 2. ՄԵՐ ԿԵՆԱՅ ՀԱՄԱՐ ՄԱՐԴ ԴԱՐ-
ՉԱՎԿԵՐ, ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՏՎԵՐՈՎ ԷՐ ԳՈՐ-
ՍՈՒՄԵՐ, ԿԵՐ ՈՒ ԽՈՒՄՆԻ ԻՆՉՊԵՍ ՄԵՆԵՐ, ԵՎ
ՃՇՄԱՐՏԱՊԵՍ ՏԱՆՔՎԵՑ ու շարժարձեց և խաչ-
վեց Պիղատոս Պոնապոս ժամանակ, ԳԱՄՎԵՑ
ԽԱՅԻՆ, ՄԱՀԱՆՔԱՎ ու թաղվեց, ԿԵՆԴԱՆԱՑԱՎ,
Հարյալ Երրորդ օրը, երկինք համարձակ, ԵՎԱՎ
ՈՒ ՆՍՏԵՑ ԻՐԵՆ ԾՆՈՂ ԱՍՏՍՈ ԱՋ ԿՈՂՄՈՒՄ,
ԵՎԱՎ և հետո գալու է գաղափարներու ողջերին
ու հանգուցյալներին:

ՈՐ ՎԱՍՆ ՄԵՐՈՅ ԿԵՆԱՅ ՄԱՐԴԱՑԱԿ ԵՎ
ՄԱՐԴԱԿԵՐՊ ՇՐՋԵՑԱԿ, ԵՎԵՐ ԻՐԵՆՎ ՋՄԵՋ ԵՎ
ԱՐԲ. ՏԱՆՔԵՑԱԿ, շարժարձեց, խաչեցաւ,
ԲԵՎԵՐԵՑԱԿ, ՍՊԱՆԱԿ, թաղեցաւ, ԿԵՆԴԱՆԱՑԱԿ,
շարժաւ, վերացաւ և ԵՎ ՆՍՏԱԿ ԸՆԴ ԱՋՄԷ
ԾՆՈՂԻՆ ԻՐՈՅ ԱՍՏՈՒՍՈՅ:

ԵՎԱԳՐ..

ԵՎ ՀՆՄԱՐՈՒ շարժարձեց, և թաղեցաւ, և
շարժաւ յաւուր երրորդի, և յերկինս վերացաւ
և նստաւ ընդ աջմէ Հօր, և գալոց է գալու զմե-
ռեալս և զհինգանիս:

«Վասն հաւատոյ»-ն իսկապէս էլ դավանութիւն է, ավելի ճիշտ՝ հավատո հանգանակ սուրբ
Երրորդութեան մասին — հանգանակ, այսինքն հավատամքի և խոստովանութեան հիմունքների
ժողովումն, հավատունք: Այդպիսի հավատման լավագույն օրինակ են հայ դպրութեան սկզբնա-
վորման շրջանից Ազաթանգեղոսի եղբայրակիշ հավատո հանգանակի կանոնների մեծ մասը⁵²,
Ազաթանգեղոսի հավատո հանգանակի նմանողութեամբ և հիման վրա էլ հայ-վրացական եկեղե-
ցական միասնութեան շրջանում, ամենայն հավանականութեամբ, հենց V դարում ստեղծվել է
«Վասն հաւատոյ» հին վրացերէն հանգանակը՝ շարադրված ոչ միայն Ազաթանգեղոսի Պատմու-
թեան մէջ եղած ու Գրիգորի Վարդապետութեան և մյուս բարոյների հավաքման միջոցով, այլև
որպէս երկրորդ սկզբնաղբիւր նրանում բաղադրված է Եւագր Պոնտացու «Հաւատը որ է նիկիայ»
մեկնութեան հայերէն թարգմանութիւնը, թերեւ նաև այլ հայերէն շատադրական կամ մեկ-
նողական բնույթի երկեր:

Այսպիսով, բանասիրական իր բացառիկ արժեքի հետ միասին, հին վրացերէն «Վասն
հաւատոյ»-ն հայ-վրացական, բառիս ավանդական և արդիական իմաստով՝ ճշգրտ միասնութեան
հնագույն գրական հուշարձաններից մեկն է:

ИСТОРИЯ АРМЕНИИ АГАФАНГЕЛА И ДРЕВНЕГРУЗИНСКИЙ ТРАКТАТ «О ВЕРЕ»

АЛЬБЕРТ МУШЕГЯН

Резюме

В 1965 г. известный исследователь литературных памятников христианского Востока, бельгийский профессор Ж. Гаритт выступил с неожиданным для филологов сообщением о том, что трактат «Слово святого Ипполита о вере», сохранившийся на древнегрузинском языке в Шатбердском сборнике, на самом деле принадлежит не Ипполиту, а является лишь компиляцией различных выборок из разных частей: Истории Армении Агафангела. Однако П. Мурадян в книге «Древнегрузинские редакции Агафангела» (Ереван, 1982) пришел к неверному выводу, что якобы по мнению Гаритта, трактат «О вере» имеет отношение только к Учению Григория Просветителя, т. е. ко Второй книге Истории Агафангела. Приписывая этот свой необоснованный вывод Ж. Гаритту, П. Мурадян тут же в корреляции «Учение Гр. Просветителя — трактат о вере» производит простую перестановку и утверж-

⁵² Այսպէս օրինակ, ազաթանգեղոսի հավատո հանգանակի 12—16-րդ կանոնները հավաք-
ված են Վարդապետութեան ամենատարբեր պարբերութիւններից՝ № 12—§§ 368, 377, № 13—
§ 386, № 14—§§ 515, 326, 363, 515, № 15—§§ 516, 385, № 16—§ 390, Ազաթանգեղոսի 1909 թ.
քննական հրատարակութեան մեջ (էջ 473) նշված հավատո կանոններում ցույց են տրված միայն
հետևյալ պարբերութիւնները՝ № 13—§ 385, № 14—§ 363, № 15—§ 385:

даст, что не трактат «О вере» компилирован и выборочно изъят из Учения, а наоборот, Учение Гр. Просветителя создано на основе трактата «О вере». Приведенные нами многочисленные новые сопоставления не только подтверждают истинность заключений бельгийского профессора, но и показывают, что своеобразной экспозицией для составления древнегрузинского трактата послужил помещенный в конце Истории Армении Агафангела символ веры, а выборки из различных частей Агафангела сделаны в соответствии с канонами этого символа веры.

Помимо этого, дальнейшие поиски в европейской филологии и в древнеармянской литературе выявили наличие в трактате «О вере» второго древнеармянского литературного источника, каким является армянский перевод экзегетического сочинения Евагрия Понтийского «Вера никейская», греческий оригинал которого армянские филологи до сих пор считали утерянным. Между тем нами установлено, что упомянутый оригинал был напечатан еще в 1784 г. в Бонне и перепечатан в серии Минье «Patrologiae graecae», т. XXVIII. Таким образом, древнегрузинский трактат «О вере» составлен как учение о святой Троице, на основании по крайней мере двух древнеармянских литературных источников V века, каковыми являются История Армении Агафангела и армянский перевод трактата «Вера никейская» Евагрия Понтийского.

Некоторые веские аргументы дают основание предположить, что Учение Гр. Просветителя было написано Мецропом Маштоцем, создателем армянской письменности на основании Ветхого и Нового завета: в качестве краткой библии для повседневного пользования. Этот шедевр древнеармянской этнографической литературы был создан значительно раньше третьего вселенского Эфесского собора, созванного в 431 г.